

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 12/3

29 մարտի 2016 թ.

Քննարկվեց քաղաքացի Ալվարդ Խաչատրյանի 23.02.2016թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 10.02.2016թ-ի թիվ 311873/05 որոշման դեմ:

Ալվարդ Խաչատրյանի գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 10.02.2016թ-ի թիվ 311873/05 որոշման (այսուհետ նաև Որոշում) մեջ գրված է «Շատին գյուղապետարան» ՊՈԱԿ, մինչդեռ Շատին գյուղապետարանը ՊՈԱԿ չէ՝ համայնքի ղեկավարը և ավագանին տեղական ինքնակառավարման մարմիններ են, իսկ համայնքապետարանի աշխատակազմը համայնքային կառավարչական հիմնարկ:

Որոշման համաձայն վարչական պատասխանատվության են ենթարկել մի մարդու, որն արդեն 3 տարի է, ինչ հաշվապահի պաշտոնը չի զբաղեցնում: Ալվարդ Խաչատրյանը հայտնում է, որ 05.04.2013թ-ց սեփական դիմումի համաձայն ազատվել է Շատինի գյուղապետարանի պաշտոնից: Այսինքն, Որոշումը կայացվել է առանց համապատասխան նյութերի ուսումնասիրությամբ:

Ինչ վերաբերվում է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.3 հոդվածի իրավախախտմանը, ապա Շատին համայնքի բյուջեն ձևավորվում և հստատվում է համայնքի ավագանու կողմից: Շատին համայնքի 2016թ. բյուջեն հաստատվել է 27.01.2016թ-ին, իսկ Որոշման մեջ նշված հարկերը փոխանցվել են 27.01.2016թ-ին: Ամեն տարի եկամտահարկի դեկտեմբեր ամսվա փոխանցումը կատարվել է նույն ժամանակին ու դեռ ավելի ուշ և նման խնդիրներ չի առաջացել: Բացի այդ, Եղեգնաձորի ՏՀՏ-ից տեղեկացրել են, որ վճարումները ժամանակին են կատարված:

Ալվարդ Խաչատրյանը հայտնում է, որ Որոշմամբ վարչական պատասխանատվության սուբյեկտ չի հանդիսանում, քանի որ Շատինի գյուղապետարանի հաշվապահը չի հանդիսանում և ընդհանրապես առնչություն չունի գյուղապետարանի հարկային վճարումների հետ, որոնք ինչպես նշվել է, կատարվել են ժամանակին:

Ելնելով վերոգրյալից՝ Ալվարդ Խաչատրյանը խնդրում է չեղյալ համարել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 10.02.2016թ-ի թիվ 311873/05 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննելով 03.02.2016 թ-ի 230 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ «Շատին գյուղապետարան» ՊՈԱԿ-ի հաշվապահ Ալվարդ Խաչատրյանը հարկերը սահմանված ժամկետում չի վճարել:

Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.3-րդ հոդվածով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 10.02.2016թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 311873/05 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ալվարդ Խաչատրյանին վարչական տույժի ենթարկելու մասին՝ նշանակելով տուգանք 20.000 դրամի չափով:

Հարկ է նշել, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 279-րդ հոդվածի համաձայն. «Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է, արդյոք, վարչական իրավախախտում. արդյոք, տվյալ անձը մեղավոր է այն կատարելու մեջ. արդյոք, նա ենթակա է վարչական պատասխանատվության. կան, արդյոք, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներ..., ինչպես նաև պարզել գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ»:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Որոշումը կայացվել է վերոգրյալ իրավանորմի պահանջների խախտմամբ: Այսպես, Ալվարդ Խաչատրյանը, որպես «Շատին գյուղապետարան» ՊՈԱԿ-ի հաշվապահ, հարկերը սահմանված ժամկետում չվճարելու համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.3-րդ հոդվածի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության: Սակայն, գործում առկա է 22.02.2016թ-ի Շատին համայնքի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի 05.04.2013թ. թ-իվ 6 հրամանի քաղվածքը, որի համաձայն Ալվարդ Խաչատրյանն ազատվել է Շատին գյուղապետարանի գլխավոր մասնագետ-հաշվապահի պաշտոնից և «Շատին գյուղապետարան» ՊՈԱԿ-ի կողմից հարկերը սահմանված ժամկետում չվճարելու խնդրի հետ Ալվարդ Խաչատրյանը որևէ առնչություն չի ունեցել: Այսինքն, քննարկվող դեպքում Ալվարդ Խաչատրյանի կողմից վարչական իրավախախտում չի կատարվել, նա մեղավոր չէ այն կատարելու մեջ: Հետևապես, նրա նկատմամբ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.3-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվությունը ևս կիրառելի չէ:

Հաշվի առնելով վերոգրյալ փաստական հանգամանքները և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Բեկանել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 10.02.2016թ-ի թիվ 311873/05 որոշումը, իսկ գործը՝ կարգել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ